

## ՊԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ԲԱՅԱԿԱՆ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԻ ՇՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

### Ա. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայ քերականագիտության մեջ հատկապես վերջին շրջանում լուրջ աշխատանք է կատարվել գրաբարի բայական անդամի խնդիր լրացումների վերաբերյալ եղած պատկերացումների ճշգրտման և հստակեցման ուղղությամբ: Հանգամանալից քննության են ենթարկվել դրանց տեսակային ու խոսքիմասային արտահայտությունները, նաև կառուցվածքային դրսևորումները<sup>1</sup>: Սակայն գրաբարի խնդիրների համակողմանի և սպառիչ բնութագրման տեսակետից պակաս կարևոր չէ նաև նախադասության կազմում նրանց շարադասական առանձնահատկությունների նկարագրումը:

Ակաժ Մ. Չամչյանից՝ հայ քերականագիտությունը ավանդաբար տարբերակել է խնդիր լրացումների երկու տեսակ՝ սեռի և բնության (իմաստի)<sup>2</sup> առաջինները բնորոշ համարելով ներգործական և կրավորական բայերին, երկրորդները՝ բոլոր բայերին: Եվ եթե սեռի (ուղիղ և ներգործման) խնդիրների ճանաչման հարցում ի սկզբանե այլակարծություններ չեն դիտվել, ապա բավական երկար ժամանակ բնության խնդիրների շարքում նկատի են առնվել նաև պարագա լրացումները<sup>3</sup>: Ներկայումս «բնության խնդիր» եզրույթը միանգամայն հստակ բովանդակային դրսևորում ունի. բնության խնդիր բայական անդամի լրացումը «գործառու է բայիմաստի խնդրատությամբ և ցույց է տալիս ենթակայի արտահայտած գործողության հետ երկրորդաբար (անուղղակիորեն) առնչվող որևէ առարկա, որը նախադասությունը դարձնում է հաղորդակցականորեն ավելի կոնկրետ ու ծավալուն»<sup>4</sup>: Գրաբարն ունի հանգման, անջատման, միջոցի, վերաբերության, հաղորդման, սահմանափակման և այլ բնության խնդիրներ: Սրանց շարադասության վերաբերյալ եղած հազվադեպ կարծիքները խիստ ընդհանուր են, տարտամ, երբեմն՝ լեզվական փաստերով չհիմնավորված, երբեմն էլ՝ հակասական: Քերականագիտության մեջ հպանցիկ դիտողություններ կան բայական լրացյալի հետ բնության խնդիրների փոխդասավորության բացարձակ ազատ վիճակի, դրա ոչնչով չկարգավորվող բնույթի մասին՝ արված գերազանցապես բայական բառակապակցության ներսում նրա բաղադրիչների փոխհարաբերության հիմքի վրա, այլ ոչ թե նախադասության՝ իբրև ամբողջական ու ավարտուն շարահյուսական և հաղորդակցական կառույցի տեսանկյունից: Մինչդեռ նախադասության մեջ տեղաշարժման լայն հնարավորություններով հանդերձ՝ բնության խնդիրների շարադասությունը ևս, ինչպես այլ բաղադրիչների դեպքում է, շատ հաճախ արդյունք է տարբեր գործոնների: Ի վերջո այս հարցում կարևոր է նաև համապատասխան վիճակագրական տվյալների հաշվառումը, որ թույլ կտա հանգման, միջոցի, անջատման և այլ խնդիրների շարադասության վերաբերյալ եզրահանգումները հիմնավորել բնագրային փաստերի ստույգ հաշվարկներով:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ղազարյան, Հայ գրական լեզվի պատմություն, էջ 427-473, Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 88-274:

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 9-26 և ուրիշներ:

<sup>3</sup> Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ - ԺԹ դդ., Եր., 1990, էջ 347:

**Հանգաման խնդիր:** Հին գրական հայերենում հանդես է գալիս բոլոր սեռերի (և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեզոք) բայերի հետ գերազանցապես տրականով, նաև նախադրությամբ կամ նախդրավոր կապակցություններով՝ ցույց տալով այն առարկան, որին հանգում, մոտենում, մատուցվում, տրվում, հաղորդվում կամ առնչվում է որևէ բան (առարկա կամ երևույթ): Այս խնդրի իմաստային առումները գրաբարում բազմաթիվ են, այնուամենայնիվ դուրս չեն գալիս հանգաման իմաստային դաշտի սահմաններից: Նախադասությամբ արտահայտվող մտքի տրամաբանական ընթացքի ելակետը կատարող առարկան է, որի գործողության իրացումը պահանջում է մեկ այլ առարկա, որին լայն իմաստով հանգում է գործողությունը, և դրանով միտքը դառնում է ավելի ամբողջական ու ավարտուն: Ասել է թե՛ գրաբարում հանգաման խնդրի հետադաս դիրքի սովորականությունը տրամաբանական արդարացում ունի: Եվ իրոք, վիճակագրական հաշվումների համաձայն՝ հանգաման խնդրի հետադասությունը դասական գրաբարի ինքնուրույն գործերի լեզվում շուրջ 82, իսկ թարգմանությունների լեզվում նույնիսկ ավելին է՝ 87 տոկոս: Ընդ որում, գերակշռում են զեղչված ենթակայով (նաև անենթակա) կառույցները, որոնք կազմում են հետադաս հանգաման խնդրով նախադասությունների շուրջ 65 տոկոսը, ինչպես՝ Մատոյց պատարագ *Աստուծոյ* հօր իրոյ Իսահակայ (ԾԱՆՊ., ԽԶ, 1): Ախոյեան ելանեմ *քեզ* ի մերոց զօրաց աստի (Ագաթ., 39): Մի՛ խառնակեսցուք *ընդ անարգութիւն պղծութեան* (ն.տ., 147): Կարօտէր *Աստուծոյ արուեստագիտութեանն* (Եզն., 8): Հրաման ետ հրովարտակա տալ առ *Յովնաթան* օրինակաւս այստիկ (Ա Մակ., ԺԱ, 29): Նուիրեսցես զայն նուէր *առաջի Տեառն* (Ելից, ԻԹ, 24):

Հետադասվող մյուս բնության խնդիրները, հատկապես պարագաները, սովորաբար չեն ընկնում բայի և նրա հանգաման խնդրի միջև, այլ մեծ մասամբ հաջորդում են վերջինիս. Որք կապեալ էին *ի կոսպաշտութեանն անլուծանելի հանգուցիւք* (Եղ., 16): Ախոյեան ելանեմ *քեզ* ի մերոց զօրաց աստի (Ագաթ., 39): Նեղութիւն յաճախեմ *քեզ փոխանակ կենաց* (ն.տ., 55): Ծառայեցի *քեզ յամենայն գորութենէ իմմէ* (ն.տ., 52): Հայիցիս *ի նմա մտօք* (Յովբ., Է, 17):

Իսկ եթե բայն ու հանգաման խնդիրն ընդմիջարկվում են, ապա հիմնականում ուղիղ խնդրով, ինչպես՝ Պատմեցից *զանուն քո եղբարց իմոց* (Ագաթ., 589): Մի՛ հարից *զքեզ ընդ գետիսն* (Բ Թագ., Բ, 22): Մատուցես *զգուարակն առ դրան խորանին վկայութեան* (Ելից, ԻԹ, 10): Երևեցո՛ղ *զքեզ ինձ* (Ագաթ., 310) և այլն: Ի դեպ, դասավորության վերոհիշյալ կարգը գրեթե նույնությամբ պահպանվում է նաև բայական լրացումների առաջադասության դեպքում. այստեղ ևս խնդրառու բային ամենամտորը մեծ մասամբ կրկին հանգաման խնդիրն է. Պարզես *այնոցիկ շնորհէր* (Ագաթ., 869): *Ջիր թագաորութեանն ծիրանիս Քրիստոսի* աւանդէր (ն.տ., 459): *Ծափս զծափի* հարեալ.... ասէ (Բուզ., 128):

Ենթակայով կառույցներում ևս հետադաս հանգաման խնդիրը սովորաբար լրացյալին անմիջապես հաջորդող բայական լրացումն է. ինչպես՝ Լիկիանէս յանդիման լինէր *թագաորին* (Ագաթ., 28): Չոհք և ողջակէզք մատչին *Աստուծոյ* (Եզն., 281): Կին ժրագլուխ գործակից է *առն իրում* (Առակ., ԼԱ, 17) և այլն:

Համեմատաբար քիչ է հանդիպում այն շարադասական տարբերակը, որտեղ ենթական է խնդրառու բայի և հանգաման խնդրի արանքում, ինչպես՝ Արար տէր *Աստուած* Ադամայ և կնոջ նորա հանդերձս (ԾԱՆՊ., գ, 21): *Ծնաւ* ապա Փառանձեմ *թագաւորին* ուստր մի (Բուզ., 124): Այս մասնակադասարը բնորոշ է հատկապես գրաբարի ասացական բայերով կառույցներին. *Կարդացի՛ն* նոքա առ *Աստուած* (Եպթ., ԺԱ, 2): Եւ *գոչեաց* Սամուէլ առ Տէր զգիշերն ամենայն (Ա Թագ., ԺԵ, 11): Իսկ ընդհանրապես հետադաս ենթական, իբրև տրամաբանորեն անընչանակ շարադասական բաղադրիչ, սովորաբար եզրափակում է հանգաման խնդրով նախադասությունը. ինչպես՝ Եկն դիպեցաւ սմա *օտար պատանի մի աշխարհական* (Բուզ., 226): Քաղցրացան նմա *խիճք հեղեղատի* (Յովբ., ԻԱ, 33):

Հանգաման խնդրի՝ նախադասությունը եզրափակող շարադասությունը քերականական հիմնավորում ունի, եթե այն միայնակ կամ իր լրացումներով հանդես է գալիս հաջորդող երկրորդական նախադասության լրացյալի դերով: Նմանօրինակ դիրքը ամենահարմարն է խնդրի և նրա ծավալում լրացում երկրորդական նախադասության քերականական կապի իրացման տեսակետից, ավելին՝ այդպիսի խնդիրը նաև դառնում է գլխավոր նախադասության մեջ տրամաբանական շեշտի կրողը՝ վերածվելով հաղորդվող մտքի կենտրոնի: Օրինակ՝ Առ ի պահպանութիւն իւրոց ծանօթիցն, զորոց և պատմէր իսկ (Ագաթ., 157): Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն... միջամուխ եղեալ յաստուածատոր հրամանացն հանգամանս (Կոր., 36): Եւ ինքն... հպատակէ մնա և մեծամեծացն, որ ի դրան նորա են (ՂՓՊՀ, 113):

Հանգաման խնդրի հետադաս դիրքը ծառայում է նրա տրամաբանական ընդգծմանը նաև այն դեպքում, երբ այն գլխավոր նախադասության մեջ ցուցական կամ որոշյալ դերանվամբ արտահայտված ձևական խնդիր է: Վերջինս, իրենով պայմանավորելով երկրորդական նախադասության բնույթը, բարդ կառույցի մեջ դառնում է այն տրամաբանական առանցքը, որը, ինչպես գրում է Վ. Քոսյանը, «մատնանշում է հաղորդման բուն նպատակը»<sup>4</sup>. Ձայնակից լիցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ որբային (Եղ., 54):

Այնուհանդերձ, պատմողական նախադասություններում հանգաման խնդիրը տրամաբանական շեշտի կրողն է հիմնականում խնդրառու բային անմիջապես նախորդող դիրքում. *Ամենայնի տևէ, ամենայնի հաւատայ, ամենայնի համբերէ* (Ա Կորնթ. ԺԳ, 9): *Մեզ անմտացս* ուսուցէ զմաստութիւն (Ա.տ., 798): Քո առաջադիմութիւն *ամենեցուն* յայտնի լինիցի (Ա Տիմ., Դ, 7): Այսպիսի հանգաման խնդիրը հաճախ զուգակցվում է սաստկական բառերով, որոնք ավելի են ընդգծում նախադասությամբ հաղորդվածի մեջ խնդրի առաջնային դերը. *Անձին և եթ խորհիցէ, ինքեան և եթ* պահիցէ զգիտութիւն (Եզգ., 8) և այլն:

Հաճախ առաջադաս հանգաման խնդիրը, թեև բայից ընդմիջարկված է այլ բաղադրիչներով, սակայն մնում է տրամաբանական շեշտի տակ, եթե նախադասության սկզբում է՝ նախորդող նախադասության մտքի հետ անմիջական կապի պահպանման նպատակով. *Նմա և բարի իսկ ասել ոչ մարթի* (Եղ., 93): *Սորա լինին որդիք երեք և դուստր մի* (ՄխՊՀ, 204):

Սակայն հանգաման խնդիրը կարող է հայտնվել նախադասության սկզբում ոչ միայն ընդգծման կամ իմաստային, այլ նաև քերականական գործոնով պայմանավորված: Նկատի ունենք այն դեպքերը, երբ հարաբերական դերանվամբ արտահայտված խնդիրը՝ որպես նախադասությունները կապող քերականական միջոց, զբաղեցնում է երկրորդական նախադասության սկիզբը: Ի տարբերություն տրամաբանորեն շեշտակիր առաջադաս հանգաման խնդրի, որը սովորաբար անմիջապես է հարում իր բայական լրացյալին, այսպիսի խնդիրը հեշտությամբ կարող է ընդմիջարկվել լրացյալից բայական այլ լրացումներով, հաճախ նաև ենթակայով կամ նրա խմբով. *ինչպէս՝ Մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր* (Բուգ., 192): *Զէ համեմատ այնմ պատուականութեան, որում մեք ցանկամք* (ՂՓՊՀ, 136): *...յորում սաստկապէս հարեալ սատակեցան զօրքն Հերովդի յօգնականութենէ քաջացն Հայոց* (ՄխՊՀ, 143) և այլն:

Անջատման խնդիր: Այս խնդիրը գրաբարում (և ոչ միայն) գործառում է անվան բացառական հոլովով և ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, բաժանվում կամ ծագում է ինչ-որ բան: Ոչ մեծաթիվ բայեր, գերազանցապես անջատման իմաստ արտահայտող, կարող են առնել այսպիսի լրացում: Դրանցից են՝ *ազատել, առնուլ, անջատանալ, ապստամբել, բառնալ, բեկանել, բժշկել,*

<sup>4</sup> Վ. Քոսյան, Ակտուալ անդամատունը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Եր., 1990, էջ 40:

դատարկանայ, զատանել, գերծանել, զրկել, թաքչել, խզել, խլել, խնդրել, խոտորել, խորշել, կթել, կողոպտել, կորզել, հանել, հատանել, հետանալ, հրաժարել, ճողոպրել, մեկուսանալ, պահանջել, վրիպել, փրկել, քակել: Ի տարբերություն հանգման խնդրի՝ այս խնդիրը գրաբարում ոչ միայն իր արտահայտման ձևերով, այլև իմաստային առումներով հարուստ չէ<sup>5</sup>: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ անջատման խնդիրը դասական գրաբարում մաս համեմատաբար քիչ (նախորդից գրեթե երեք անգամ պակաս) գործածվող բայական լրացում է և նախադասության կազմում իր տեղով էլ համեմատաբար թույլ է ամրակալված: Թեև ինչպես երկկազմ, այնպես էլ միակազմ նախադասություններում կանոնականը, որ համարյա հավասարաչափ դրսևորում ունի ինքնուրույն և թարգմանական գործերում, անջատման խնդրի հետադասությունն է, սակայն այդ կանոնականը բացահայտ գերակշռություն չունի (ընդամենը 62-65 տոկոս): Ընդ որում, հետադաս անջատման խնդիրների կեսից էլ փոքր մասն է բայական լրացյալին հարաբերակցում մերձակա դիրքում:

Օրինակներ՝ Մարտեալ *ի ամանէ* հարսն իր (Սիր., Խ, 7): Կորեալ *յիճէն* փախուստ իմ (Սաղմ., ԾԽԱ, 5): Ածն *ի չգոյէ* ի գոյ զչգոյսն և եցոյց *յոյճչէ* յինչ զչէսն (Եզն., 7): Եհան *յիճէն* Աստուած զնախատինս իմ (ԾԱճ., Լ, 23):

Համաձայն վիճակագրության՝ բայական լրացյալն ու հետադաս անջատման խնդիրը սովորաբար ընդմիջարկվում են այլ շարադասական բաղադրիչներով, մասնավորաբար ենթակայով կամ ուղիղ խնդրով. ինչպես՝ Եկին հասին *հրամանք հրովարտակացն* ի մեծ թագաւորէն (Ագաթ., 161): Եւ լուեալ *զայն ամենայն բարեպաշտ կաթողիկոսն սուրբ Սահակ* ի թագաւորէ (ՂՓՊՀ, 17) և այլն:

Ինչ վերաբերում է անջատման խնդրի առաջադասությանը, որ գրաբարում համեմատաբար ավելի նկատելի իրողություն է, ապա, ինչպես կարծում է Խ. Բաղիկյանը, այն ունի տրամաբանական արդարացում. «Անջատման գաղափարը նախ կապվում է առարկայի հետ, այդ պատճառով էլ մարդու ուղեղում սկզբից ծագում է այդ առարկան, ապա նոր՝ նրա հետ կատարվող գործողությունը»<sup>6</sup>: Ընդ որում, այդ առարկան անվանող առաջադաս խնդիրը լրացյալին մերձակա դիրքում վերածվում է տրամաբանորեն ամենամշտնական կիր անդամի՝ իր վրա վերցնելով մտքի շեշտը:

Օրինակներ՝ Մարդոյ մարմին *ի չորից տարեքց* խառնեալ է (Եզն., 61): Արդ և *յիրեանց բանիցն իսկ* ոչ ամաչիցեն (Ա.տ., 209): *Ի մէջ* պահանջէ վրեժխնդիրն Աստուած (ՂՓՊՀ, 149):

Առաջադաս անջատման խնդրի ընդգծվածությունն ավելի ակնհայտ է, երբ զբաղեցնելով նախադասության սկիզբը՝ վերածվում է նախորդ մտքի հետ տրամաբանական կապի միջոցի. Եւ *յայնմ մորոյ* են չարիք մարդկան (Եզն., 21): Եւ *ի սմանէ* ասեն լինել զտունն վարածնունի (ՄԽՊՀ, 42): *Ի ամանէ* ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց (Ա.տ.): *Ի սմանէ* ուցի զհանգամանս (Եզն., 77):

Եվ վերջապես, անջատման խնդրի համար ևս նախադասության սկիզբը քերականական դիրք է, եթե ծառայում է բարդ կառույցի մեջ բաղադրիչ նախադասությունների ստորադասական կապին: Խոսքը վերաբերում է երկրորդական նախադասության մեջ հարաբերական դերանվամբ արտահայտված անջատման խնդրին. ինչպես՝ Ժառանգեսցեն գնա, *յորմէ* դուքն յափրացայք (Թուոց., ԺԴ, 31): Առեալ Աբրահամու կին զՔետորայ, *յորմէ* ծնան Եմբան և եղբարք նորա (ՄԽՊՀ, 230):

<sup>5</sup> Տե՛ս Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 141-146:

<sup>6</sup> Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976, էջ 161:

**Միջոցի խնդիր:** Հին գրական հայերենում այս խնդիրն արտահայտության պլանում հատկանշվում է նկատելի բազմազանությամբ: Դրսևերման հիմնական ձևը գործիական հոլովն է, դրա կողքին առկա են նաև նախդրիվ տրականով, հայցականով և բացառականով կիրառություններ, նախադրությամբ կազմություններ: Միջոցի խնդիրն աչքի չի ընկնում զանազան իմաստային առումներով: Ցույց է տալիս այն առարկան կամ երևույթը, որով (որի միջոցով) կատարվում է գործողությունը: Այսպիսի խնդիր կարող են առնել գրաբարի տարբեր իմաստային խմբերի պատկանող բազմաթիվ բայեր՝ առանց սեռային սահմանափակման: Դատելով բնագրային հատվածների վերլուծության արդյունքներով՝ դասական գրաբարում իր գործածությամբ միջոցի խնդիրը քիչ է զիջում հանգման խնդրին, իսկ շարադասական հատկանիշներով ավելի մոտ է անջատման խնդրին: Բայական լրացյալի նկատմամբ իր դիրքով բավականին ազատ է, սակայն նախընտրելին այնուամենայնիվ խնդրի հետադասությունն է, որ դրսևերվում է փաստերի 67- 68 տոկոսում: Դրանց միայն չնչին մասում է հետադաս միջոցի խնդիրը լրացյալին մերձակա դիրքում. Քանզի նոյն ինքն ակնարկէ *ակամք* և *նշանակէ ոտամք* (Առակ., 2, 13): Եւ չափեաց *ափով իրով* զգուրս ամենայն (Ագաթ., 139): Իսկ մեծ մասամբ հետադաս միջոցի խնդիրը իր լրացյալից ընդմիջարկված է լինում ինչպես բայական միջուկի այլ լրացումներով (հիմնականում ուղիղ խնդրով), այնպես էլ ենթակայի խմբով: Օրինակներ՝ Սրտակաթ արարեր *զմեզ* միով ակամք քով և միով քառամանեկաւ պարանոցի քո (Երգ., Դ, 9): Ապա գայր սպարապետն վասակ և բախէր *ընդդէմ զօրացն պարսից* մարտի պատերազմաւ (Բուզ., 117): Եւ ազգային նոցա կամսար մկրտի *իւրայոյքն հանդերձ՝* ի ձեռն մեծին Գրիգորի (ՄԽՊԷ, 242): Երդնու *մնա* յարեգակն և յամենայն պաշտամունս իրեանց, մ.տ., 127):

Առանձնապես կայուն է խնդրառու բային արմատակից միջոցի խնդրի հետադասությունը: Բայի գործիական, նաև հայցական կամ բացառական հոլովներով դրված այսպիսի խնդրի կապակցությունը գրաբարին բնորոշ հավելադրական իրողություններից է (*պսակել պսակս, դատել դատաստան*), որ թարգմանվում է սովորաբար մեկ բառով՝ միայն բայով. Համբուրեցէ զիս *ի համբուրից* բերանոյ իւրոյ (Երգ, Ա, 1) - *Կհամբուրի ինձ իր բերանով*:

Նկատելի է, որ գրաբարում հետադասության են ձգտում հատկապես բազմակի միջոցի (և ոչ միայն) խնդիրները, և հազվադեպ են դրանցից մեկը կամ ավելին առաջադասվում բայական լրացյալին. Այլ հանդերձելով հանդերձեցես զնա *յոչխարաց քոց, և ի ցորենոյ քումմէ, և ի հնձանէ քումմէ* (Բ Օրին., ԺԵ, 14): Ընդ իս բարեկամացան *ուխտիս և երդմամբ* (ՂՓՊԷ, 58): Եւ լցան *զանձիք բազմօք և գինու և զարդու, և բազում աւարաւ, և անչափ մեծութեամբ* (Բուզ., 118): Եւ երդնու Օսպոն արքայ *յարեգակն և ի ջուր և ի կրակ* (մ.տ., 153) ի դեպ, սրանց առաջադասությունը կարելի է մեկնաբանել ավելի շատ ձևի, քան թե միջոցի իմաստով. *Դիւթութեամբք և հմայիւք և քաղէութեամբք* վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէ (Եզն., 150): Եւ *այլազգի պարգեւօք և պատուօք...* ցուցանէին զամենեսեան (ՂՓՊԷ, 54):

Միջոցի խնդրի առաջադասությունը, եթե թելադրված չէ նախորդող կամ հաջորդող նախադասության հետ տվյալ նախադասության ունեցած ստորադասական կապի դրսևերմամբ (Եւ մեծն Անահիտ, *որով* կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց (Ագաթ., 381): ... *որով* դատաստանաւ դատէք (Մատթ., Է, 1): ...*որովք* մնա զպաշտօնն մատուցանեմք... (Եզն., 14), ապա գլխավորապես ընդգծման դիրք է, որտեղ խնդիրը հատկապես բայից անմիջապես առաջ դառնում է նախադասությամբ հաղորդվող մտքի կենտրոնը. ինչպես՝ Քանզի ոչ եթէ *անհրաւութեամբ ինչ* յաղթել ջանամք (Եզն., 22): *Աստուածովն և եթ* խօսէր ընդ Արրահամու (մ.տ., 230): Ծառայ որ *ընդ ունկն* ոչ լսէ՝ *ընդ մկանունս* տան լսել մնա (մ.տ., 43):

Առաջադաս ընդգծված միջոցի խնդիրը ևս նախորդների մեծ հաճախ նա-

խաղասության սկիզբ է մղվում որպես նախորդած մտքի հետ տրամաբանական կապի միջոց: Նման դեպքերում լրացյալի հետ նրա մերձակցությունը սովորաբար ընդմիջարկվում է շարադասական այլ բաղադրիչներով. *Ձերով գորութեամբ* ես կարօտեալ իցեմ (Յովբ, 2, 22): *Նորհմբք* սոքա կարօտեալք են (Ա Մակ., ԺԲ, 9):

Վերաբերության խնդիր: Սա գրաբարում դրվում է *զ* նախդրիվ բացառականով (պատմական բացառական), երկրորդաբար նաև *ի* նախդրիվ բացառականով, *առ*, *ընդ* նախդրիվ հայցականով<sup>1</sup>, *ի վերայ*, *վասն*, *յաղագս* նախադրություններով ու սեռականով և ցույց է տալիս այն առարկան, որի մասին կամ վերաբերյալ ասվում, խոսվում կամ հաղորդվում է ինչ-որ բան: Լրացյալ են դառնում հիմնականում ասացական, զգացական և իմացական բայերը: Կանոնականը վերաբերության խնդրի հետադասությունն է, որ վիճակագրության համաձայն՝ հանդիպում է այս խնդրով կառույցների մոտավորապես երկու երրորդում: Գրեթե հավասարաչափ են բաշխվում հետադաս վերաբերության խնդրի՝ լրացյալին մերձակա և ընդմիջարկված դիրքերը: Խնդրատու բայից նրան ընդմիջարկողը սովորաբար ենթական է, երբեմն՝ խնդիրները, ավելի հազվադեպ՝ պարագաները: Օրինակներ՝ *Ջարմանային ժողովուրդքն* ընդ վարդապետութիւն նորա (Մատթ., Է, 28): Եւ ի շաբաթս երիս յօսեցաւ *ընդ նոսա* ի գրոց (Գործ. ԺԷ, 2): *Ջոր պատուիրեաց քեզ* առ որդիսն Իսրայելի (Ելից., ԻԵ, 2):

Անշուշտ քերականական դիրք է և գրաբարում հաճախադեպ վերաբերության խնդրի առաջադասությունը, եթե այն արտահայտված է երկրորդական նախադասությունը գլխավորին կապող հարաբերական դերանվամբ. Որպես ասեք զՔրիստոս որդի Դաւթի, *գորով* Դաւիթ իսկ նշանակեաց Հոգովն սրբով (Ագաթ., 451): ... *գորով* մարգարէանայ հայրն (ՄԽՊԷ, 18):

Առաջադասության մյուս դեպքերը գերազանցապես ծառայում են վերաբերության խնդրի՝ որպես հաղորդվող մտքի կենտրոնի, տրամաբանական ընդգրծմանը, որ խնդիրն առանում է հատկապես բային մերձակա առաջադաս դիրքում. ինչպես՝ Յործամ *զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր գորութենէն* ճառիցէ ոք (Եզն., 6): Դոյնպէս *զհարսանեաց* առասպելեալ երգեն (ՄԽՊԷ, 176) և այլն:

Միասնության խնդիր: Գրաբարում արտահայտվում է գործիական հոլովով, *հետ*, *հանդերձ* կամ *առընթեր* նախադրությամբ կապակցություններով, ինչպես նաև մի քանի նախորավոր կառույցներով և ցույց է տալիս այն առարկան, որը ենթակայի հետ մասնակցում է գործողությանը: Այսպիսի լրացում կարող են առնել ամենատարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր: Ընդ որում, միասնության խնդիր կարող են դառնալ միայն անձ ցույց տվող գոյականները. Սպարապետն հասանէր իւրով *զնրաւ* (Բուզ., 203): Իրի անունն այդ ձևի մեջ ոչ թե համատեղում են միասնության և միջոցի իմաստները, ինչպես կարծում է Վ. Քոսյանը<sup>2</sup> (*Հացի* մատուցէ զպատարագն), այլ իրապես հենց միջոցի խնդիր է կամ ձևի պարագա (*ինչո՞վ* կամ *ինչպե՞ս կմատուցի պատարագը*): Այդպես է նաև՝ *կերայ զհաց իմ մեղու իմով*, արբի զգինի իմ *կաթամբ իմով* (Երգ, Ե, 1) և այլն:

Միասնության խնդրի համար ևս կանոնականը հետադասությունն է, որ փաստվում է բնագրային հատվածների վիճակագրությամբ. լրացյալին հաջորդում է դրանց շուրջ 70 տոկոսը՝ հիմնականում ընդմիջարկված նրանից ամենատարբեր շարադասական բաղադրիչներով. ինչպես՝ Եւ եկեալ որդւոյ առ Աքրահամ *երկուք հրեշտակօք* (Եզ., 94): Վասակ սպարապետն Հայոց ելանէր ընդ առաջ նորա *երկոտասան քիւրու* (Բուզ., 124):

Միասնության խնդրի առաջադասությունը ևս, մասնավորաբար խնդրատու բային անմիջապես նախորդող նրա դիրքը, ոճական շրջումությունն է, որի շնորհիվ

<sup>1</sup> Տե՛ս Վ. Քոսյան, *Աշխ.* աշխ., էջ 148, 223:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 157:

խնդիրը դառնում է նախադասության տրամաբանական շեշտի կրողը, ինչը ընթացողի ուշադրությունը ամբողջովին սևեռում է նրանով արտահայտված առարկայի վրա. *Ինչպես՝ Ընդ բարեկամին իրում ընդ Մովսիսի* խօսեր (Եզն., 153): Եւ գերկիրս ամենայն *ընդ թեզ* տարար (ՄԽՊՀ, 190): *Ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս և ընդ փարիսացիս* ուտեր (Եզն., 228):

Առանց էական տարբերությունների, հիմնական գծերով նույնպիսին է նաև գրաբարի մյուս՝ համեմատաբար քիչ հանդիպող բնության խնդիրների (սահմանափակման, բացառման, համեմատության) շարադասության պատկերը: Մնում է՝ հանրագումարելով հոդվածի սահմաններում կատարված վերլուծության արդյունքները, հանգել ընդհանուր եզրակացությունների.

ա. V դարի գրաբար երկերի լեզվում գործառու էն բայական անդամի մի շարք բնության խնդիր լրացումներ, և չկա մի այնպիսի բայ, որն իր ներխոսքիմասային իմաստով պայմանավորված՝ չպահանջի որևէ բնության խնդիր: Բազմազան խնդրային նշանակությունների առկայությունը, սակայն, գրաբարում բնության խնդիրների «մանրատման» և դրանց քանակի մեխանիկական ավելացման բավարար նախապայման լինել չի կարող: Հաշվի առնելով այդ իմաստների ներքին աղերսներն ու մերձակցությունը և գիտակցաբար հեռու մնալով ավելորդ մանրատումների գայթակղությունից՝ ընդունելի ենք համարում բնության խնդիրների առավել ընդհանրացված և ավանդականին մոտ տարբերակումը՝ գրաբարին բնորոշ համարելով հանգման, անջատման, միջոցի, վերաբերության, միասնության, սահմանափակման, բացառման և համեմատության բնության խնդիրները:

բ. Բայական անդամի ինչպես խնդիր, այնպես էլ պարագա լրացումների շարադասությունը քննելիս անհրաժեշտ է դուրս գալ շարահյուսական նվազագույն կառույցի՝ բայական բառակապակցության շրջանակներից և հարցը քննել նախադասության շրջանակներում՝ դրանք դիտելով իբրև նախադասության շարահասական բաղադրիչներ, որոնց դիրքը նախադասության մեջ որոշվում է ոչ միայն լրացյալի հետ փոխդասավորության ոլորտում, այլև պայմանավորված է նախադասության՝ որպես ամբողջական և ավարտուն շարահյուսական միավորի մեջ ունեցած հաղորդակցական նշանակությամբ, ոճական-արտահայտչական արժեքով կամ քերականական նպատակահարմարությամբ: Եվ ավելին՝ այլ շարահասական բաղադրիչների մեջ նախադասության մեջ բնության խնդիր դիրքը հաճախ կարող է թելադրված լինել նաև ավելի մեծ՝ «հաղորդակցական միասնական և անքակտելի միավոր»՝ հանդիսացող բարդ կառույցի պահանջով, որի բաղադրիչն է տվյալ խնդիրն ունեցող նախադասությունը:

գ. Բնագրային հատվածների տվյալների վիճակագրական քննությունը հաստատապես վկայում է, որ շարադասության ազատությամբ հանդերձ՝ դասական գրաբարի համար կանոնականը բոլոր բնության խնդիրների հետադասությունն է: Վերջինս առավել նկատելի է հատկապես թերի (զեղչված ենթակայով) և միակազմ կառույցներում: Ենթակայի կամ նրա խմբի առկայությունը թեև ընդհանուր առմամբ էապես չի փոխում բնության խնդիրների շարադասության վերոնշյալ պատկերը, այնուամենայնիվ մեծացնում է նախադասության կազմում այդ խնդիրների տեղաշարժման հնարավորությունները: Հետադաս բնության խնդրով երկկազմ լրիվ նախադասությունները դրսևորվում են մի քանի շարահասական մասնակադասարներով, որոնցից հիմնականը V դարի հայերենում  $S \rightarrow P \rightarrow O$  բն. խնդիր՝ մասնակադասարն է (շուրջ 65 տոկոս), որը մեծ մասամբ ունենում է հետադաս բնության խնդիրն իր լրացյալից ընդմիջարկող այլ բայական լրացումներ ևս՝ սովորաբար ուղիղ, համեմատաբար սակավ դեպքերում՝ այլ խնդիրներ,

՝ Ռ. Հովհաննիսյան, Հին հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը, Եր., 1972, էջ 155:

\* Օգտագործված են պայմանական նշաններ հետևյալ իմաստներով՝ S- ենթակա, P- ստորոգյալ, O- խնդիր, A- պարագա:

երբեմն նաև՝ պարագաներ: Բնության խնդիրների հետադասության 28 տոկոս կազմող դեպքերում գրաբարը գործառու է երկկազմ լրիվ նախադասությունների  $P \rightarrow S \rightarrow O$  բն.խնդիր շարադասական մասնակաղապարը, որտեղ խնդրառու բայի և բնության խնդրի արանքում ենթական է, և 7 տոկոս դեպքերում՝  $P \rightarrow O$  բն.խնդիր  $\rightarrow S$  շարադասական մասնակաղապարը, որտեղ ենթական՝ իբրև տրամաբանորեն աննշան շարադասական բաղադրիչ, եզրափակում է բնության խնդրով նախադասությունը:

դ. Բնության խնդրի առաջադասությունը, մասնավորաբար խնդրառու բային նախորդող նրա մերձակա դիրքը (Օտիդ խնդիր/A  $\rightarrow$  Օբն.խնդիր  $\rightarrow P \rightarrow S$ , Օտիդ խնդիր/A  $\rightarrow$  Օբն. խնդիր  $\rightarrow P$  և այլ շարադասական մասնակաղապարներ) նախադասության կազմում նրան տրամաբանորեն ընդգծող դրությունն է, երբ իր լրացյալի նկատմամբ փոխդասավորության սովորական կարգի շրջմամբ հայտնվելով նրանից անմիջապես առաջ՝ բնության խնդիրն այդ դիրքում դառնում է հաղորդվող մտքի տրամաբանական կենտրոնը: Միաժամանակ, ինչպես տեսանք, բնության խնդրի առաջադասությունը ոչ միշտ է շրջունություն՝ ոճական-արտահայտչական նշանակությամբ, այն երբեմն ունի քերականական-իմաստային հիմնավորում:

### Հ ա մ ա ռ ո տ ա գ ը ո թ յ ու ն ն ե Ր

- Ագաթ.** - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:  
**Եգն.** - Եգնկայ վարդապետի Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:  
**Եղ.** - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:  
**Կոր.** - Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941:  
**ՂՓՊՀ** - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904:  
**ՄԽՊՀ** - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913:  
**Ս. Գրքի** (Աստուածաշունչ մատենն Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ.Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ **Ա. Եգր.**- Գիրք Եգրասայ առաջներորդ, **Ա. Կորնթ.** - Առ Կորնթաթացիս առաջներորդ, **Ա. Թագ.**- Գիրք առաջներորդ Թագաւորաց, **Ա. Մակ.**- Գիրք առաջներորդ Մակաբայեցոց, **Առակ.**- Առակք Սողոմոնի, **Ա. Տիմ.** - Առ Տիմոթէոս առաջներորդ, **Բ. Թագ.**- Գիրք երկրորդ Թագաւորաց, **Բ. Օրին.** - Գիրք երկրորդ Օրինաց, **Գործ.**- Գործք առաքելոց, **Եբր.** - Առ Եբրայացիսն, **Ելից** - Գիրք էլից, **Եսայի-Մարգարէութիւն Եսայեայ,** **Երգ.**- Երգ երգոց, **Երեմ-** Մարգարէութիւն Երեմիայի, **Թուոց** - Գիրք թուոց, **ՄՃնդ.** - Գիրք ծննդոց, **Մատթ.** - Ս. Աւետարանի Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի, **Մարկ.** - Ս. Աւետարանի Յիսուսի Քրիստոսի ըստ Մարկոսի, **Յովք.** - Գիրք Յովքայ, **Սաղմ.**- Գիրք Սաղմուսաց, **Սիր.**- Գիրք Սիրաքայ:

**С. А. АЙРАПЕТАН - К вопросу словопорядка косвенных (природных) дополнений в классическом граре.** - Вопросы словопорядка косвенных дополнений в древнеармянском языке до сих пор в грамматической науке не рассматривались, хотя с точки зрения уточнения представлений о них наряду с описанием типовых разновидностей и структурных проявлений немаловажное значение имеет также рассмотрение особенностей их словорасположения.

В статье делается попытка анализировать данную проблему с выходом за рамки глагольного словосочетания, где позиция дополнения определяется только во взаимосвязи с глаголом. Такой подход позволяет рассматривать косвенное дополнение в качестве словопорядковой составляющей предложения со своей коммуникативной значимостью, стилистической ценностью или грамматической целесообразностью. Выделяются словопорядковые модели двусоставных (полных и неполных) и односоставных предложений с косвенными дополнениями, уточняется практическая частотность каждой из них в древнеармянском языке.